

ՀԵՌԱՌԻՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ
ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

(ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի հեռաուսուցման լաբորատորիայի Գյումրու
մասնաճյուղի օրինակով)

Հ. Մելքոնյան, Լ. Ղուկասյան, Ա. Զարգարյան

20-րդ դարի վերջին կրթության համակարգում ընթացող բարեփոխումներում շեշտադրված են հիմնականում միջազգային կրթական հանրությանը ինտեգրացման հիմնախնդիրները: Դիտարկվում է հեռաուսուցման տեղայնացման ու ներդրման պատմությունը Հայաստանում՝ ԵՊՀ հեռաուսուցման լաբորատորիայի Գյումրու մասնաճյուղի օրինակով: Կատարված աշխատանքների արդյունքում իրականացվել են հետազոտություններ ու վերլուծություններ և առանձնացվել են հեռաուսուցման համակարգի զարգացմանը նպաստող առանձին դրույթներ, որոնք կնպաստեն ՀՀ-ում հեռաուսուցման համակարգի ներդրման աշխատանքներին:

Առանցքային բառեր. կրթության համակարգ, զարգացում, կրթության զարգացում, հեռաուսուցում, բաց ուսուցում:

XX դարի վերջին կրթության համակարգում տեղի ունեցան լայնածավալ փոփոխություններ, որոնք հիմնականում ուղղված էին հասարակության կրթական կարիքների բավարարմանը, կրթության համապատասխանությանը աշխատաշուկայի պահանջներին, կրթության որակի բարձրացմանը, կրթության իրականացման միջոցների կատարելագործմանը:

Ընթացող բոլոր բարեփոխումներում շեշտադրված են միջազգային կրթական հանրությանն ինտեգրացման հիմնահարցերը, ընդ որում «կրթության համակարգի միջազգային ինտեգրացման ինտենսիվացումը կարևորվում է նաև համազգային տեսանկյունից՝ որպես ողջ հայության գիտելիքների և անձնային որակների համադրման միջոց» [1]: Այս տեսանկյունից անհրաժեշտ է դառնում կրթության համակարգում այնպիսի նպատակաուղղված գործունեության իրականացումը, որն ուղղված է ոչ միայն կրթության ոլորտի կատարելագործմանը, անձի զարգացմանը, այլ տվյալ երկրում սովորող մարդու կրթությանն ու դաստիարակությանը, այդ երկրի գիտության զարգացմանը, տնտեսապես բարենպաստ կրթություն ստանալու հնարավորությունների ընդլայնմանը: Սա ենթադրում է գիտելիքի փոփոխություն, թարմացում, նորացում, նոր մասնագիտությունների արագ ներդրում, կյանքի պայմանների և աշխատանքի փոփոխություն, գիտակցված, արդյունավետ սոցիալական հարաբերությունների ձևավորում և այլն: Այս խնդիրներն էին, որոնք հիմնականում ուսուցման նոր ձևերի ներդրման պատճառ հանդիսացան ՀՀ-ում: Այդ փորձն աշխարհում արդեն կար և «Դրա մասին դեռևս 1924 թ. «Pitmans Journal» ամսագրի նյութերից մեկը նվիրված էր «Կրթության ոլորտում վերջին տարիների ամենահետաքրքիր երևույթներից մեկին՝ այսպես կոչված «բաց ուսուցմանը» (open learning) և «հեռաուսուցմանը» (distance learning): Նշենք, որ դեռևս XIX դարում գոյություն ունեին «Ուսուցումը փոստի միջոցով» գաղափարը, երբ փոստի սկիզբ դրվեց լեզվի կարճ դասընթացների անցկացմանը» [1]:

XX դարի 90-ական թվականների սկզբին միջազգային մեծ ճանաչում ունեցող Տեմպուս ծրագրի ուղղություններից մեկն էլ կրթական նոր համակարգերի՝ հեռաուսուցման և բաց ուսուցման տեղայնացումն ու ներդրում էր Հայաստանում: Այդ աշխատանքների

իրականացման արդյունքում Գյումրիում 1998 թ. հիմնվեց այլընտրանքային կրթություն ապահովող հեռաուսուցման տարածքային կենտրոնը: Կենտրոնի դասընթացի մասնակիցները մասնագիտանում են սոցիալական աշխատանքի և սոցիալական քաղաքականության բնագավառում: Գործունեության առաջին տարիներին դասընթացի մասնակիցները հիմնականում սոցիալական աշխատանքի գծով աշխատողներ էին, ովքեր չունեին մասնագիտական կրթություն: Ուշադրության է արժանի այն փաստը, որ դասընթացին մասնակցում էին ոչ միայն սոցիալական աշխատանքի գծով տեսուչներ կամ կոնկրետ այդ հաստիքով աշխատողներ, այլ նաև առանձին բաժինների վարիչներ, փոխտնօրեններ և տնօրեններ: Մա «Սոցիալական աշխատանք» մասնագիտության ճանաչման, տարածման և ներդրման ամենաարդյունավետ գործընթացն էր այդ տարիներին, որն հատկապես Գյումրիում խիստ անհրաժեշտ էր: Բնականաբար, տարիների ընթացքում տեխնոլոգիական, տնտեսական և այլ զարգացումների արդյունքում փոփոխվեցին հեռաուսուցման համակարգում կրթության իրականացման պայմանները, ձևերն ու տարբերակները, եղան նաև կառուցվածքային փոփոխություններ: Այսօր ԵՊՀ հեռաուսուցման լաբորատորիայի Գյումրու մասնաճյուղը գործում է և ունի նաև այդ համակարգի զարգացմանը նպաստող հեռահար նպատակներ: Մինչ այսօր այս համակարգում սովորել և կրթություն է ստացել ավելի քան 210 մասնակից:

Կատարելով տարբեր հետազոտություններ և վերլուծություններ (սովորողների կրթական կարիքներ, կարծիքներ, սոցիալական հետազոտություններ, զրույցներ, դասավանդողների կարծիքներ, պրակտիկայի գրառումներ և այլն) և ամփոփելով հեռաուսուցման համակարգի այդ տարիների գործունեությունը՝ կարելի է առանձնացնել հեռաուսուցման համակարգի զարգացմանը նպաստող հետևյալ գործընթացների իրականացման անհրաժեշտությունը.

- ✚ նոր մասնագիտությունների, ինտեգրատիվ կամ առանձին մասնագիտացումների գծով կրթության կազմակերպում,
- ✚ հեռաուսուցման միջոցով կրթություն ստանալու համար անհրաժեշտ համակարգչային գիտելիքների իմացություն,
- ✚ ուսումնական դասընթացների բովանդակության գիտական ու հետաքրքիր մշակումներ,
- ✚ սովորողներին ինքնուրույնության, ազատության տրամադրում, նրանց հետաքրքրությունների և կարիքների հաշվառում,
- ✚ ուսման մատչելիության ապահովում ֆինանսական տեսանկյունից,
- ✚ առանձին սոցիալական խմբերի համար ուսուցման նոր մեթոդիկաների մշակում և ներդրում,
- ✚ դասավանդողների գիտելիքների և դասավանդման մեթոդիկաների կատարելագործում,
- ✚ հասարակությանը հեռաուսուցման համակարգի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության շարունակական տրամադրում,
- ✚ կրթության այդ համակարգում սովորելու մշակույթի ձևավորում և տարածում,
- ✚ պետական կառույցների կողմից այդ համակարգում սովորողներին տրվող վկայագրերի ճանաչման նշանակության բարձրացում և այլն,

- ✚ աշխատաշուկայի պահանջների և հասարակության կրթական կարիքների ուսումնասիրություն,
- ✚ գործատուների և կրթություն իրականացնողների միջև ակտիվ համագործակցություն:

Պետք է նշել, որ, այնուամենայնիվ, մեր երկրում հեռաուսուցման համակարգի ներդրման աշխատանքները դանդաղ են ընթանում և անհրաժեշտ է պետական, օրենսդրական, կանոնակարգված մոտեցում և աջակցության ցուցաբերում այդ հարցերին:

Գրականության ցանկ

1. Փոխակերպվող Հասարակություն 1,2/02 Հեռաուսուցումը Հայաստանում, գլխ. խմբ. Լյ. Հարությունյան, խմբ. Խորհուրդ՝ Բրայան Քերնի, Էնդրյու Քորնվել, Նորին Քերնի, Փեմ Շեքսպիր: